

**ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ  
ՌՈՒՄ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

**Լենա Գրիգորյան**

*բ. գ. թ., պրոֆեսոր*

*ԱրՊՀ*

**Բանալի բառեր.** *Արևմտյան Հայաստան, Թուրքիա, Անդրկովկաս, գեղասպանություն, ռուս գրողներ, ցավ, կարեկցանք, դատապարտում, հատուցում, արդարություն, հաղթանակ:*

Հայերի գեղասպանության թեման ռուս գրականության մեջ իր արձագանքն է գտել դեռևս 1890-ական թվականների երկրորդ կեսին, երբ արյունարբու սուլթան Աբդուլ Համիդը 1894-96թթ. Արևմտյան Հայաստանի ողջ տարածքում զանգվածային կոտորածներ սանձազերծեց՝ նպատակ ունենալով ճնշել հայոց ազգային- ազատագրական շարժումը և ի չիք դարձնել Հայկական հարցը: Այդ դիվային պատուհասի մասին գրված առաջին գեղարվեստական գործը Ե. Ալիբեկովայի «Ժամն է»(1896) ծավալուն բանաստեղծությունն է, որի մեջ խտացված է ողջ հայ ժողովրդի ապաբախտ ճակատագիրը 19-րդ դարավերջին: Բանաստեղծուհին հայերի փրկությունը տեսնում է Ռուսաստանի օգնությամբ և «բարի Ռուսիային» կոչ է անում չհապաղել, ձեռք մեկնել հավատակից եղբայրներին: Ցավով ու անհանգստությամբ են տոգորված նաև Ե. Մորոզովի, Գ. Կանսոնի, Վ. Շուֆի, Յու. Վեսելովսկու բանաստեղծությունները:

Յուրի Վեսելովսկին (1872-1919), որ սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում ու տիրապետում էր հայոց լեզվին և հետագայում պիտի դառնար հայ գրականության ու մշակույթի անխոնջ, նվիրյալ ջատագով – տեսաբան, հայ գրողներին նվիրված մենագրությունների առաջին ռուս հեղինակը, ուսանողական տարիներից էր սկսել հետաքրքրություն ցուցաբերել դեպի իր համար առեղծվածային հինավուրց երկիրը՝ Հայաստանը: Արդյունքում ծնվում է երիտասարդ բանաստեղծի հայկական շարքը՝ «Հայերին», «Հայաստանում», «Հայ ժողովրդին», «Ավերակների վրա», «Ծեր հայը՝ փոքրիկ տղային», «Վարդան Մամիկոնյանի դիմանկարի առջև», «Գիշերը Ավարայրի դաշտում» և այլն: Հետագայում գրած «Հայաստան»(1911), «Հայ կալանավորի մտորումները»(1916), «Նոր տարվա շեմին» (1918) բանաստեղծություններում հեղինակը, ցատումով դատապարտելով թուրք մարդակերների անօրինակ զազանությունները, իր աներեր հավատն է արտահայտում տառապյալ հայ ժողովրդի վերածննդի անխուսափելիության նկատմամբ:

Հայաստանի ու հայ ժողովրդի հանդեպ մի առանձին սեր էր տածում Վասիլի Նեմիրովիչ-Ղանչենկոն (1845-1936): 1876 -77թթ. ռուս – թուրքական պատերազմի տարիներին լինելով զինվորական թղթակից՝ նա բազմիցս ականատես է դարձել թուրքական բարբարոսություններին: Դրոնք էլ հիմք են ծառայել գրելու որդիական սիրով ու անհուն ցավով առլեցուն (գրողի մայրը հայուհի էր)«Ինչի՞ համար»,

«Փոքրիկ պոեմներ», «Տարագրի աղոթքը», «Երգեր Հայաստանին», «Գարնանը» և այլ բանաստեղծություններ, որոնք հանգում են մի ընդհանուր մարդասիրական պահանջի՝ վերականգնել հայերի ազգային ազատությունն ու անկախությունը, վերջ տալ կոտորածներին ու հալածանքներին: «Դժբախտ երկրի վշտով» է շաղախված նաև հեղինակի արձակը, ահավասիկ՝ «Հայուհի Գայանեն» պատմվածքը: Չենթարկվելով մուսուլմանական վայրենի *աղաթին*՝ հայ աղջիկը ինքնասպան է լինում, որպեսզի հարեմական հարձ չդառնա:

1915թ. Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաշատ վայրերում մոլեգնած աննախադեպ աղետի դեմ առաջիններից մեկը հանդես եկավ Վալերի Բրյուսովը (1873-1924), ով Մ. Գորկու հորդորանքով արդեն ձեռնամուխ էր եղել «Հայաստանի պոեզիան» անթոլոգիայի կազմման աշխատանքներին և ում ներդրումը ռուս-հայկական մշակույթային կապերի պատմության մեջ առ այսօր էլ մնում է չգերազանցված: Բավական է ասել, որ նա թարգմանել, ռուս ընթերցողի սեփականությունն է դարձրել քառասունից ավելի հայ բանաստեղծների շուրջ երկու հարյուր գործեր՝ Գր. Նարեկացուց մինչև Վ. Տերյան ու Ե. Չարենց, հեղինակել «Հայ ժողովրդի պատմական բախտի տարեգրությունը» հիմնարար աշխատությունը (1918), «Հայաստանի պոեզիան» ժողովածուի բազմամեջ ներածական ակնարկը (1916)՝ չհաշված հայ գրականության ու մշակույթի թեմաներով կարդացած բազում դասախոսություններն ու զեկուցումները՝ դրանցով իսկ ճանաչելի դարձնելով բախտի չար խաղով «թափառող ցեղերի» խառնամբոխի մեջ հայտնված հայ ժողովրդին, որի մասին ոչինչ կամ գրեթե ոչինչ չգիտեր ռուս հասարակությունը: Հայաստանն ու նրա պատմական անցյալը մեծ մարդասերին ոգեշնչել են գրելու բանաստեղծական շարք: «Հայաստանին»(1915), «Հայերին», «Տիգրան Մեծ», «Ազատություն և պատերազմ», «Արարատին», «Արարատը Երևանից», «Հաղթանակը Կարսի մոտ», «Արքայի աղոթքը» (բոլորը՝ 1916) և մյուս գործերում վստահություն է հայտնում, որ՝

*Տիգրանի ազգը հաղթական  
Հողմից, մուժից դուրս կգա հար,-  
Հանուն սիրո անապական  
Ու սիրանքի նոր ու պայծառ:<sup>1</sup>*  
(թարգմ. Ս. Տարոնցու)

Բանաստեղծ, Կովկասյան ճակատի ռազմական գործողությունների մասնակից, ռուսական բանակի զեներալ Ա. Կուլեբյակինը անսքող հիացմունք ուներ Հայաստանի, նրա ժողովրդի և մշակույթի նկատմամբ, ինչի առիավատչյան 1916թ. Թիֆլիսում լույս տեսած «Վանի արձագանքներ» գիրքն է: Հեղինակը

<sup>1</sup> Վ. Բրյուսով, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Ե., 1976, էջ 11:

գովերգում է հայոց անկրկնելի բնության գեղեցկությունները, պատմական – հոգևոր կոթողները («Վանա լճում», «Վանա ժայռը», «Աղթամար», «Վարագավանք»), սրտի կակիծով պատկերում հռոտովող երկրի ողբերգությունը («Վանի անկումը», «Կույր կինը», «Հին Վանը»), սրտաբուխ տողեր նվիրում

մայր ժողովրդի պաշտպանության համար մարտչող անվեհեր հայորդիներին («Վանի պաշտպանությունը»): 33 մաս ներառող «Մեերի դուռը» պոեմում բանաստեղծը նպատակ է ունեցել ռուս ընթերցողին ծանոթացնել մեր ժողովրդի հերոսական անցյալին, գուգահեռներ անցկացնելով Փոքր Մեերի և ռուսական բիլինաների հերոս Սվյատոգորի միջև: Կուլեբյակինի գիրքը «անկասկած, մեծ հետաքրքրություն է ներկայացնում, -նշել է Ս. Գորոդեցկին,- մանավանդ հիմա, երբ Ռուսաստանն սկսում է ճանաչել ու սիրել Հայաստանը»:<sup>1</sup>

1919թ. գրած «Արաքս», Հովհ. Թումանյանին նվիրված և այլ բանաստեղծություններ ներծծված են «արևոտ երկրի» լուսավոր ապագայի հանդեպ խոր հավատով:

Մաքսիմ Գորկին (1868-1936) մեկ անգամ չէ անդրադարձել հայ ժողովրդի բեկված ճակատագրին, հանդես եկել նրա շահերի պաշտպանությամբ: Դեռևս 1905թ., դառնալով ցարական իշխանությունների հրահրած հայ – թաթարական ընդհարումներին՝ «Կովկասյան իրադարձությունների մասին» հոդվածում գրել է. «Մակաբյոծների չար ուժը յուր դրությունը պաշտպանելու համար կանչում է երկրի ամենավայրենի, ամենատխմար մարդկանց (իմա՝ Կովկասի թաթարներին – Լ. Գ.) այն մարդկանց (հայերի – Լ. Գ.) դեմ, որոնք անկեղծորեն և անշահ ցանկանում են իրենց երկրի ու ժողովրդի համար բարիք և ազատություն»:<sup>2</sup>

«Ռուսական ցարը» պամֆլետում (1906) Գորկին դատապարտել է ցարական կառավարության՝ «Հայաստանն առանց հայերի» ստոր քաղաքականությունը: 1929թ. գրած «Դիլիջանի կիրճում» ակնարկում անվանի գրողն իր մերժողական վերաբերմունքն է արտահայտել թուրք կառավարող շրջանների հանդեպ: Գորկու խմբագրությամբ հրատարակված «Հայ գրականության ժողովածուն» (1916) ևս յուրովի բողոք էր երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության դեմ:

Իվան Բունինը (1870-1953), «Ոլորուն ականջներ» (1916) պատմվածքում խստորեն դատապարտելով թուրք ելուզակների հեղինակած ցեղասպանությունը՝ այն դիտում է իբրև համայն մարդկության դեմ գործած ոճիր և դնում հանցագործներին պատասխանատվության կանչելու խնդիրը:

Արևմտահայությանը վիճակված գեհեներ խորապես հուզել է և ռուս այլ մտավորականների: Ցավով ու կարեկցանքով են հազեցած Կոնստանտին Սայանսկու «Հայաստան», «Մոռացվածը», «Մեծ նահատակին», «Մեռյալների երթը», Յակով Բարանովսկու «Հայ ժողովրդին», Վլադիմիր Կիպլինովի

<sup>1</sup> Ս. Գորոդեցկի, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Ե., 1980, էջ 91:

<sup>2</sup> Տես՝ Կ. Դանիելյան, Արցախը՝ չսանձած նժույգ, Ե., 2001, էջ 51:

«Փախստականները», Ալեքսանդր Կուշլյուի «Վանի գագեյ», «Ավերված Վանը», Սերգեյ Պերիվերդիևի «Ուրախացիր արևով» բանաստեղծությունները, Եվգենյա Բակովոյի «Ի պաշտպանություն թուրքահայերի» պոեմը: Ստեփան Կրոտկին «Ողջոյն Հայաստանին», «Հանուն հայրենիքի երջանկության» և այլ գործերում հույս է հայտնում, որ տանջահար, բայց գեղեցիկ և իր համար շատ սիրելի Հայաստանը ուժ կգտնի վերածնվելու, որ հայ ժողովրդի համար կգան երջանիկ օրեր: Լավատեսությամբ են համակված Եկատերինա Ալեքսենայի՝ 1916-17թթ. գրած «Մայր Հայաստան», «Ինչու՞ եք լռում», «Հայաստան», «Զինվորներին» և հայկական շարքի մյուս բանաստեղծությունները: Հեղինակը հավատում է հայ ժողովրդի կենսական ուժին, ֆիզիկական ու հոգևոր վերածննդին, որ շուտով «այդ հպարտ երկրում կցրվի գիշերային մշուշը»՝ տեղի տալով հարության ցայգալույսին: Այդ ոգով են շնչում նաև Կոնստանտին Բալմոնտի (1867-1942)՝ Հայաստանին ձոնված բանաստեղծությունները:

Ռուս, հատկապես հայերի սարսափելի ողբերգությանն ակնատես գրողների ստեղծագործություններում առանձնահատուկ տեղ է գրավել ազատության համար մեր ժողովրդի մղած համառ պայքարը: Հայ կամավորական ջոկատներից մեկի հրամանատար Քեռուս (Արշակ Գաֆայյան) են նվիրված Յուրի Վերխովսկու «Քեռու հիշատակին», Սերգեյ Զարովի «Քեռու մահը» բանաստեղծությունները: Վ. Յազվիցկին «Հայ կամավորներին» բանաստեղծության մեջ փառաբանում է ժողովրդական վրիժառուների՝ ֆիդայիների սխրանքները, «Հայ հերոսը» ակնարկում վեր հանում հայդուկապետ Անդրանիկ Օզանյանի լեգենդար կերպարը: Բանաստեղծ Ս. Կրոտկովը ցավով, սիրով ու պատկառանքով է արտահայտվել հայ ժողովրդի մասին, իր շատ գրչակիցների նման շեշտելով նրա՝ ազատության հասնելու անկոտրում կամքը, ինչի վկայություն կարող են դառնալ «Ուտքի, Հայաստան», «Հայ ջոկատայինների երգը», «Ազատություն», «Հրաժեշտ», «Հայուհու օրորոցայինը», «Հայաստանի պատկերը», «Ինչի՞ համար», «Լուսաբաց» ստեղծագործությունները: Ալեքսանդր Պոպովը՝ Միք. Նալբանդյանի «Իտալացի աղջկա երգը» («Մեր հայրենիք») հիշեցնող «Հայ աղջկա երգը» բանաստեղծության մեջ պատկերում է, թե մարտի մեկնող եղբոր համար աղջիկն ինչպես է գիշերներ լուսացնելով՝ խաչակիր դրոշակ հյուսում, որի հովանու ներքո պիտի կովեն հայ կամավորականները՝ հանուն հայրենիքի փրկության:

Միանգամայն ճիշտ է այն կարծիքը, որ ցեղասպանության թեման անհամեմատ ամբողջական է ներկայացված Սերգեյ Գորոդեցկու (1884-1967) ստեղծագործություններում, ով մեծ վաստակ ունի հայ գրականությունը ռուս հասարակության շրջանում մասսայականացնելու, երկու ժողովուրդների մշակութային կապերը սերտացնելու գործում: Նա՝ որպես զինվորական թղթակից, շրջելով Արևմտյան Հայաստանում, անձամբ ակնատես է եղել տասնյակ հազարավոր գաղթականների ողբալի վիճակին, ամայացած քաղաքներին, մեռած գյուղերին և տեսածի ծանր տպավորությունները, մտորումները, տազնապներն ու հույսերը հանձնել թղթին՝ իր անկեղծ սերն արտահայտելով ոչնչացման եզրին

կանգնած մի խաղաղասեր , քաղաքակիրթ ժողովրդի, նրա պատմության, բնության, դարերով ստեղծված նյութական ու հոգևոր արժեքների նկատմամբ, զայրույթով ու պարսավանքով դատապարտելով եղեռնագործներին: 1916-ին «Արմյանսկի վեստնիկ» հանդեսում տպագրված «Դրախտի երգեր» խորագիրը կրող բանաստեղծական շարքում և 1918-ին Թիֆլիսում լույս տեսած «Հայաստանի հրեշտակը» ժողովածուում հեղինակը էջ առ էջ ներկայացնում է բզկտված երկրի պատկերը: Անհնար է առանց ապրումի կարդալ «Երեխան», «Խելահեղը», «Աղջկա ձեռքերը», «Այգի», «Արճակ», «Պանդխտուհին» գործերը: Բանաստեղծը «ամենադժբախտ երկրում» տեսավ նաև ծագող ուժեր, կյանքի խլրտում և հավատաց, որ հայ ժողովուրդը չի պարտվել, կշարունակի ապրել, հարատևել («Հայաստան», «Հայաստանի հրեշտակը»): «Երբեք չեն կործանվում այն ժողովուրդները, որոնք կարողանում են ծանր աղետների և ստորացումների պահերին պահպանել ազգային արժանապատվությունը: Չի կործանվի և Հայաստանը»<sup>1</sup>, - նշել է Գորոդեցկին: 1915թ. արհավիրքն ավելի ընդգրկուն կերպով իր արտացոլումն է գտել հեղինակի «Գետակների և հրաբուխների երկրում» ակնարկաշարում, «Շամիրամի այգիները» (1924) անավարտ վեպում, բազմաթիվ այլ հրապարակումներում:

Ս. Գորոդեցկին՝ մարգարեաբար կանխագգալով հայության դեմ ուղղված՝ Աթաթուրքի և Լենինի միջև (իմա՝ թուրք- բոլշևիկյան) խմորվող անբարո սիրախաղը, ինչի հետևանքով պիտի տարածքներ կորցնեն արդեն Արևելյան Հայաստանը, 1919թ. մարտին «Կավկասկոյե սլովո» թերթում հրապարակում է «Ղարաբաղ» հոդվածը, որին հնարավորություն ունեցանք ծանոթանալու խորհրդային կայսրապետության փլուզումից հետո միայն: «Լինելով միասնական ազգագրորեն, տնտեսապես ու լեզվով, Ղարաբաղը դարձել է Հայաստանի միջնաբերդը, նրա արևելյան թևը: Այդպիսին էր նա անցյալում, այդպիսին է այժմ, այդպիսին կլինի ընդմիշտ: -Գրում է Գորոդեցկին, ապա և հիշեցնում:- Եթե Հայաստանը կորցնի Ղարաբաղը, ապա ազգերի ինքնորոշման գաղափարը խիստ կտոնահարվի»<sup>2</sup>: Աշխարհը, սակայն, ժամանակ չունեցավ զբաղվելու նման «մանր» հարցերով, ու այդ հակամարդկային աղաղակող սխալը ստիպված էին 70 տարի անց շտկել մեր ազատամարտիկները և պոլսահայ բանաստեղծ Զահրատի բառերով ասած՝ դրանով իսկ վրեժ լուծել 1915-ի դիմաց:

Հարավային Կովկասում 1918-20թթ. ասիական ու տեղական թուրք ջարդարարների կողմից իրականացված հայերի զանգվածային կոտորածները նույնպես անարձագանք չմնացին: Ուշադրության են արժանի մանավանդ Օսիպ Մանդելշտամի (1891-1938) բանաստեղծությունները և առաջին հերթին՝

<sup>1</sup> Ս. Գորոդեցկի, նույնը, էջ 11:

<sup>2</sup> Տես՝ Հանրագիտակ օրացույց – 1990 (կազմ. Հ. Խաչատրյան), Ե., 1989, էջ 112-113:

ավերակված Շուշի քաղաքին նվիրված «Ֆայտոնչին» (1931), որը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի կատարյալ ասպտակ-անեծք ընդդեմ հանցավոր ժամանակի.

*Քառասուն հազար մեռյալ լուսամուտ  
Ակնախոտոչներ անթիվ – անվերջ,  
Դառը տքնանքի բոժոժը հմուտ  
Թաղված է այնտեղ՝ լեռների մեջ:  
Անանթաբար շիկնում արևից,  
Մերկ տներն են վեր նայում անթարթ,  
Միգամածում է երկինքը վերից  
Որպես մուգ – կապույտ ուն ժանտախտ:<sup>1</sup>  
(թարգմ. Հր. Բեյլերյանի)*

Հետագա տարիներին էլ Հայաստանին ու հայ ժողովրդին նվիրված ստեղծագործություններում ռուս գրողները այս կամ այն կերպ անդրադարձել են ցեղասպանության թեմային: Վոլֆ Էռլիխի «Ալազյազի պատումներ»(1931), Նիկոլայ Ջարուդինի «Երբ ծաղկում է որթատունկը»(1934), Իվան Կատանի «Յոթ գարունների երկրում» (1934) գեղարվեստական ակնարկները, Նիկոլայ Տիխոնովի «Հայտնության օրեր»(1962) ճամփորդական նոթերը, Վասիլի Գրոսմանի «Բարին ընդ ձեզ»(1962), Անդրեյ Բիտովի «Հայաստանի դասերը» (1969), Ալեքսանդր Դրմշիցի «Հայաստան, սեր իմ» (1978) գրքերը, Յուրի Կարաբչիսկևու «Հայաստանի կարոտը» (1978) վիպակը ասվածի ապացույցներ են:

Բանաստեղծ Ալեքսանդր Գիտովիչի (1909-1966) «Խնջույքները Հայաստանում» (1944) և «Արաքսի ձախ ավին» (1964) շարքերում ամփոփված են հեղինակի հայաստանյան տպավորությունները՝ զուգորդված դարասկզբին տեղի ունեցած քստմնելի իրադարձությունների դառը վերհուշով: Արսենի Տարկովսկին (1907-1989) «Կոմիտաս» բանաստեղծության մեջ խտացրել է ողջ հայ ժողովրդի ողբերգությունը: Սրտացավությամբ են հագեցած Միխայիլ Մատուտվսկու (1915-1990) «Խաչքարեր, խաչքարեր», «Օերերը Գոշում», «Գոշի առասպելը», «Չարենցի կամարը», «Օիծեռնակաբերդի հուշարձանը» բանաստեղծությունները, որոնք տեղ են գտել նրա «Տողեր տաք թոնրից» (1985-86) շարքում: Հայի բարդ ճակատագրի մասին է Բորիս Չիչիբանինի «Սաղմուս Հայաստանի» շարքը, նրանց մասին, ովքեր յաթաղանագարկ են եղել սոսկ նրա համար, որ այլ ազգության էին պատկանում:

Վերա Զվյագինցևան (1894-1972), որ նշանակալից ավանդ ունի հայ դասական և նոր ժամանակների պոեզիայի լավագույն նմուշները ռուս ընթերցողին ներկայացնելու գործում, և ում մտերմաբար *Հայաստանի բանաստեղծ* էին անվանում, «Իմ Հայաստանը», «Հայ ժողովրդին», «Ստամբուլ» (1960) և այլ գործերում անհաշտորեն նշավակում է ցեղասպանություն իրականացնողներին: Վլադիմիր Կոռնիլովի «Ռադիոհաղորդում» (1987) բանաստեղծության մեջ

<sup>1</sup> Հայկական հարց, Ե., 1996, էջ 249:

մերկացվում է թուրքական պետության քաղաքականությունը, որն ամեն կերպ փորձում է ժխտել, թաքցնել 1915-ի հետ կապված իրողություններն ու փաստերը:

Ցեղասպանության թեմային արձագանքել են նաև Մարիա Պետրովիչը («Մեկ Հայաստան կա աշխարհում միայն», 1957), Մեմյոն Լիպկինը («Երևանյան վարդ», 1965, «Հայերի վշտի տարելիցը», 1972), Նիկոլայ Տարասենկոն («Քարերի երկիր Հայաստանը», 1968), Ալեքսանդր Կուշները («Հեշտ է գետին իրեն կուլ տալ», 1988), Անատոլի Ծչերբակովը («Նամակ», 1989), Եվգենի Եվտուշենկոն և այլք:

Մումգայիթով ծայր առած մերօրյա (հուսանք, որ վերջին) ցեղասպանությունը բառիս բուն իմաստով շփոթեցրել էր ռուս գրողներին. մի թե նման բան կարելի էր սպասել աշխարհի «ամենադեմոկրատական» երկրում: Ահա թե ինչու այն բավական ուշ գրական թեմա դարձավ: Թերևս բացառություն էր Միխայիլ Դուդինը (1916-1994), հայ ժողովրդի ազնիվ բարեկամը, ում սրտին ավելի մոտ էին հայության ապրումներն ու ակնկալիքները: Պատահական չէ, որ ռուս մտավորականներից առաջինը նա այցելեց փոթորկվող Հայաստան, Արցախ: Եկավ ոչ միայն ցավակցելու մեզ, այլև տեսնելու, հրճվելու, ողջունելու, սատարելու՝ մեր համաժողովրդական շարժումը դիտելով որպես փրկության սպեղանի: Այդ շարժառիթով գրած շարքում բանաստեղծը հավատում է, որ հայ ժողովուրդն իր երդվյալ թշնամիներից վրեժխնդիր կլինի ապրելով, արարելով, հարատևելով (քանզի, ինչպես Գ. Էմինը կասեր՝ մեր ոսոխները չեն հասկանում, չեն կարող հասկանալ, որ հայ ժողովուրդը ոչ այնքան քանակ է, ինչքան որակ)<sup>1</sup>.

*...Բայց դու գտնում ես քո մեջ միշտ*

*Զգտում հացի ու երգի:*

*Եվ ես սիրում եմ քեզ վաղուց*

*Կյանքի հանդես հավատի համար, Հայաստան:<sup>2</sup>*

(տողացի թարգմ.)

Հետագայում՝ ի պաշտպանություն Արցախի ազգային – ազատագրական շարժման հանդես եկան Անդրեյ Նույկինը, Գալինա Նույկինան, Իննեսա Բուրկովան, Յուրի Չեռնիչենկոն, Վալենտին Օսկոցկին, Անատոլի Շաբադը, Կիրիլ Ալեքսևսկին, Կոնստանտին Վոնոպսկին, Կիմ Բակշին, Մարինա Կուդինովան, ռուս արդի գրականության այլ ներկայացուցիչներ:

### Ամփոփում

Հողվածում խոսվում է ինչպես 1890-ական թթ. և 1915թ. Արևմտյան Հայաստանում ու Թուրքիայի այլ հայաշատ վայրերում, այնպես էլ 1918-20թթ. և 1988-90թթ. Հարավային Կովկասում իրականացված հայերի ցեղասպանությանը նվիրված ռուս գրողների ստեղծագործությունների մասին, որոնց հեղինակները՝ խորին ցավ ու կարեկցանք արտահայտելով, ցատումով դատապարտում են թուրք

<sup>1</sup> Գ. Էմին, Յոթ երգ Հայաստանի մասին, Ե., 1981, էջ 62:

<sup>2</sup> М. Дудин, Земля обетованная, Е., 1989, стр. 411:

և աղբբեջանցի ոճրագործներին ու վստահություն հայտնում հայ ժողովրդի ոտնահարված իրավունքների վերականգնման, արդարության հաղթանակի հանդեպ:

**Тема геноцида армян в произведениях русских писателей**

Лена Григорян

**Резюме**

*Ключевые слова:* Западная Армения, Турция, Закавказье, геноцид, русские писатели, боль, сострадание, осуждение, возмездие, правосудие, победа

В статье говорится о произведениях русских писателей, посвященных геноциду армян как в Западной Армении и на многих территориях Турции в 1890-е и 1915 годы, так и на Южном Кавказе в 1918-20, 1988-90гг. Авторы данных произведений, выражая глубокую боль и сочувствие, гневно осуждают турецких и азербайджанских преступников и выражают уверенность в том, что поправленные права армянского народа будут восстановлены и справедливость восторжествует.

**The Armenian Genocide in the Works of Russian Writers**

Lena Grigoryan

**Summary**

*Keywords:* Western Armenia, Turkey, Transcaucasia, genocide, Russian writers, pain, compassion, conviction, retribution, justice, victory

The article dwells upon Russian writers' works devoted to the Genocide of Armenians both in Western Armenia in 1890 and 1915, and in the South Caucasus in 1918-1920, 1988-1990. The authors of these works, expressing their deep sympathy and pain to the Armenian people, angrily condemn Turkish and Azerbaijani criminals, and are confident that the violated rights of the Armenian people will be restored and justice will win.